ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ «ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՈՒՆ

ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1 Հեռ: 043-69-01-01 www.npp.am Email: grigoryan_hayk@yerevan.am

03 մարտի 2025թ.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
քարտուղարի ժ/պ Շավարշ Գրիգորյանին

Հարգելի պարոն Գրիգորյան,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացքավորելու նպատակով Ձեզ է ներկայացվում Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը և հիմնավորումը:

Հարգանքով՝ **Հայկ Գրիգորյան**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2025թ. N -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՏԱԿ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Վաղաժամկետ դադարեցնել Արտակ Գավրուշայի Գալստյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները:

«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ՝ ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

03 03 2025թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԱՐՏԱԿ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ավագանու անդամը պարտավոր է մասնակցել ավագանու նիստերին, իսկ ըստ 2-րդ ենթակետի՝ մասնակցել հանձնաժողովի նիստերին, սակայն Երևան քաղաքի ավագանու անդամ Արտակ Գալստյանը չի ներկայացել Երևանի ավագանու բոլոր՝ հերթական և արտահերթ թվով 17 նիստերից 17-ին:

Արտակ Գալստյանը, ով նաև հանդիսանում է Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, ավագանու անդամի լիազորությունները ստանձնելուց հետո բացակայել է հանձնաժողովի բոլոր՝ թվով 11 նիստերից 11-ին:

Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ավագանու անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, եթե նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից:

Համաձայն Երևան քաղաքի ավագանու 26 հոկտեմբերի 2021թ. N 454-Ա որոշման 4-րդ կետի՝ Երևան քաղաքի ավագանու հերթական նիստից անհարգելի բացակայություն է համարվում, եթե ավագանու անդամը չի մասնակցել նիստի օրակարգում ընդգրկված հարցերի քվեարկությունների գրանցումների ավելի քան կեսին, իսկ նույն որոշման 4-րդ կետը սահմանում է. «Ավագանու հերթական նիստից ավագանու անդամի բացակայությունը համարվում է հարգելի՝ հիվանդության պատճառով, որի համար ավագանու անդամը, իսկ դրա անհնարինության դեպքում այն խմբակցության ղեկավարը, որի անդամ է հանդիսանում տվյալ ավագանու անդամը, Երևանի քաղաքապետին է ներկայացնում համապատասխան տեղեկանք բժշկական հաստատությունից, մինչ հաջորդող ամսվա ամսի 1-ը, կամ եթե ավագանու անդամը գտնվում է արտերկրում գործուղման մեջ: Սույն կետում նշված դեպքերում ավագանու անդամը չի զրկվում ամսական դրամական փոխհատուցումից:»:

Ինչպես հայտնի է, Արտակ Գալստյանը գտնվում է տնային կալանքի մեջ, ինչի հետևանքով չի մասնակցել ավագանու աշխատանքներին և առկա չէ օրենքով նախատեսված որևէ հիմք բացատրությունը հարգելի համարելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը և կարևորելով ավագանու նիստերին ու հանձնաժողովներին աշխատքներին ավագանու յուրաքանչյուր անդամի մասնակցության կարևորությունը՝ առաջարկում եմ վաղաժամկետ դադարեցնել Երևան քաղաքի ավագանու անդամ Արտակ Գալստյանի լիազորությունները:

«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ՝ **ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

03 ---03--- **2025թ.**